

Պատրիարզն արթուն անուն՝ գրելով նմա՝ թէ՛ մեք բնաւքս՝ մեծաւ խնդրանօք միշտ խնդրեմք. ի քոյ հարազատ եղբայր Բիւզանդեան Պատրիարդէն. զի տացէ երկրիս մերոյ Առաջնորդ զիւր սիրազուն որդի Սարգիս Վարդապետն: Սակայն նա՛ ոչ բնաւ լսէ մեզ՝ առ ի տալ: Եւ թէ նա եւս՝ որպէս հարկաւորեալ գրեաց ի Սաղիմայ. առ ի կատարել զխնդիրս նոցին: Ուստի յորժամ հարկաւորեցաւ, ի Մեծապատիւ յեղօրէն իւրմէ առ ի տալ նոցա Առաջնորդ զվերո գրեցեալ Սարգիս Վարդապետն: Յայնժամ կամեցաւ յղել զնա. ի Սուրբ Գահս, առ ի բարձրանալ ի պատիւ Եպիսկոպոսութեան. ի վերայ մեծի Աթոռոյն. Սրբոյն Ղեւնդեայ, մեծագոյն ընծայիւք: Քանզի ի հալալ արդեանցն իւրոց ետ կերտել մին զուտ ոսկեայ Սկիհ. զմրուխտապատ, եւ յակնդակուռ. մինչեւ ցտասն քսէ, յիշատակ Սրբոյ Էջմիածնի: Եւ յայնժամ ես եւս՝ Աբրահամ ամենայն հայոց կաթողիկոս՝ գեռ եւս՝ էի ի կոստանդնուպօլիս. եւ հանդերձեալ էի զալ ի Սուրբ Էջմիածին, առ ի յերկրպագութիւն Սրբոյ Էջման Տեղոյն: Ուստի ի հանդիպիլ այսմ պատշաճաւորութեան. եւ դիպրգութեանս: Սրբազան Պատրիարզն կոստանդնու վերո գրեցեալ. յանձնեաց առ իս՝ զիւր սիրազուն որդեակն. զի իբր, իւր փոխան Հայր լինելով ի Սուրբ Էջմիածին. հրամանաւ իւրով տայցեմ ձեռնադրել Արհի Եպիսկոպոս ի վերայ բոլոր Աեսարիոյ: Սակայն. իրաւի անհնար է ստել նախասահմանութեանն աստուծոյ. զի անզեղջք են կոչումն աստուծոյ: Քանզի ի զալ. եւ ի հասանիլ մեր ի Սուրբ Աթոռս, հանգեաւ առ քրիստոս նախ քան զմեզ առաջ. մեր անուանակից լուսահոգի. Աբրահամ սրբազան կաթողիկոսն: Եւ մերս նուաստութիւն. կամակցութեամբ. եւ ընտրութեամբ ամենայնից. եւ հաճութեամբ Ամենասուրբ Հոգւոյն ճշմարտի կոչեցաւ ի պատիւ ծայրագոյն Քահանայապետու-